

ուղիղ պահած են անունները, այլ թուրք պաշտօնէութիւնը, որոնցմէ կը քաղեն ուղեւորք իրենց տեղեկութիւնները:

Գ.

Կիսկիմ՝ եւ Թորթում:

Սպերի գաւառէն անդին՝ Ծորոխի ընթացքին վրայ, երկու օփանց հովիտները պարունակելով, կը գտնուի Հայաստանի Տայոց նահանգին հիւսիսային գաւառը «Արսեացփոր առ Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Վոհ (= Ծորոխ) դալով ի Սպերայ» (Խոր. Աշխ.): Այսօր ալ թէեւ պաշտօնական կենդրոնը կը համարուի Կիսկիմ (Կ. Kiskin), թուրք վարչութիւնն իրականին փոխադրուած է մերձաւոր Արսիս (Կ. Ersis), այնու որ աւելի իսլամացած է: Զոխի այցելած ատեն, որ երկար նկարագրած է հոս ալ իւր ուղին<sup>1</sup>, կիսանկախ գաւառիս կենդրոնն էր՝ Ծորոխի ձախ օփին վրայ Բերբաֆրակ, որ Յակոբայ Կարնեցւոյ քով տակաւին կը գրուի «մինչեւ ի Բերբաֆրակ» (էջ 17): Կիսկերտի քով անունն եղած է Pertekrek, Զոխ՝ Pertakrek:

<sup>1</sup> Հմմտ. Բ-ի, էջ 57—100, 181—182: